

ՎԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Տարեկան 14 Ժր.

Վեցամսեայ 7 Ժր.

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 Տօր.

Վեցամսեայ 1.50 Տօր.

ԿԱՆԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԸՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Redaction du Journal

«Travounik»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Трауникъ»

ВАРНА

Գրողները հոտ չեն տրուիր

ՎԵՐՋԻՆ ՍԱՐՄԱՓՆԵՐԸ

Տարածեն, Վասպուրականէն մինչեւ Կովկաս վերջին ամիսներու մէջ պատահած սարսափները հայկական նոր կոտորածները ու հալածանքները՝ որոնք օրը օրին համառօտակի հաղորդած ենք, ան գամ մըն ալ կը հաղորդենք մեր ընթերցողաց յետագայ տուեցումով, զորս քաղած ենք Բրո Արմենիայի և Գրոսկի վերջին թիւերէն:

Այս նոր և տխուր գէպերուն պատճառներն ու պատճառները որոնել և հասկնալ ուղղով մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք չեղադրով արտատպուած խօսքերուն վրայ,...

Նախ րանք թէ Մուշի Սուլուսի գիւղի և Աղթամարի մէջ հայ ֆէտայի խումբերու երեւոյթ և զանոնք ձերբակալու համար զօրք զրկուիլը ու կռիւ բացուիլը արդէն հաստատեցին մեր Գաշնակցական թերթերը և հիւպատոսները, թուրքը այդ հաստատումը ինքնարդարացումի փաստ ցոյց կուտայ նոյնը կրնէ ռուս զաւախը Գանձակի գէպերի մասին Պատասխանատուութիւնները պէտք է ճշգրտել:

ՎԱՆԻ ԴԵՊԻՐԸ

(Նամակէ Բաղուատ)

Մայիս 29ին կէսօրին քաղաք մը պայքեցաւ Աղուորձորի թաղին մէջ. ոստիկանութիւնը ամէն կողմ խուզարկութիւն կատարեց բան մը չգտաւ, Բայց հետեւեալ օրը քանի մը տեղեկութիւններ քաղեց ծեր կնիկէ մը:

Կառավարութիւնը գտաւ մըթերքներ եւ տասնեակ մը հրացաններ, Հինգշաբթի Համբարձման օրը և ուրբաթ բոլոր հայ տունները կրկին խուզարկուեցան, եւ ոչինչ չի գտան: Բայց հինգշաբթի զօրքերը հանգիպեցան քանի մը ֆէտայիներու և անոնցմէ մէկը բռնեցին:

Այս միջադէպին վրայ կառավարութիւնը սկսաւ հետապնդել ֆէտայիները, և ժողովուրդը ընդհարում մը հաւանական տեսնելով սկսաւ պաշտպանողական դիրք բռնել:

Երէկ յեղափոխական խումբի մը պետը թուրքերէ հետապնդողութեամբ վարագ, ապաստանեցաւ Կառավարութիւնը պաշարեց յեղափոխականները և կրակ ըրաւ: Կռիւլ բոլոր օրը տեւեց, թուրքերը 1000 զինուորներ եւ երկու թնդանօթ ունէին:

Կռիւլ իրիկուան դէմ դադարեցաւ երբ ձիւնը և մառախուղը ծածկեցին լեռները:

Թէնամին ամօթահար ետ քաշուեցաւ 4 զոհեր տալէ յետոյ որոնց մէջ էր Շիւքրի պէյը, գօմիսէր Հիւսնիին փեսան: Մենք ողբալի աչ մէկ զոհ չը տուինք: Բրո Արմենիո.

Կ. Պոլս, 20 Օգ.

Բաղէի ուսական հիւպատոս Մ. Շիրքօթի Մուշի մէջ կատարած քննութիւնը հաստատեց թէ յունիս ամիսէն ի վեր 27 հայեր սպաննուած են հոն. նաեւ 9 հայեր վիրաւորուած. Սուլուսի եւ ուրիշ տեղերու կռիւներէն առաջ եկած կորուստները այս թիւէն դուրս են: Այդ չորսնակի երեք գիւղերը Բիւրդուրէն կողոպտուած են, ուրիշ չարագործութիւններէ զատ Բանի մը ծառայելու բոլորովին անյարմար բանտերու մէջ 400է աւելի հայեր խոցուած են, որոնց մեծ մասը հարցաքննութեան իսկ չէ ենթարկուած: Ժողովուրդը ստիպման տակ ստորագրած է ուղերձ մը որով կը յայտարարուի թէ կացութեան զոհ է:

Թէրահանէ, 30 յուլիս

Կառավարութիւնը ամէն ճնշում ի դօրը կը դնէ հարկերը հաւաքելու համար:

Բան հայ տուններէ բազկացած Նզան հայ գիւղը ստիպուեցաւ ամէն բան ծախել ինչո՞ւ անուն քիւրտի մը, որ այդ կերպով հարստացած է: Այդ մարդը առաջ աւելավաճառութեամբ կը զբաղէր, հիմակ իր հարստութիւնը հայերէն դիզեց:

Շրջակայ գիւղերուն ալ կացութիւնը բոլորովին ողբալի է, Բիւրտերը կը վճարեն Հայոց տուրքերը որպէս զի յետոյ իրենք գրաւեն անոնց ինչքերը: Բիւրտ ազաները կը սպառնան Հայերը վռնելու:

ՄՈՒՇԻ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ

Մուշ, 15 Յունիս

Ուղուսի արիւնալի դեպիս յետոյ կացութիւնը ծանրացաւ: Կառավարութիւնը դրդում էր քրդերին, թուրքերին եւ նոյնիսկ զօրքերին կոտորած առաջ բերելու: Երկուշաբթի չուկներին

դրդուած հայերը տներն էին քաշել: Ութ օր յետոյ կառավարութեան ճնշուածները վրայ հայերը հարկադրուեցան խանութները բանալ, բայց ստակումը մեծ էր, որովհետեւ թուրքերը խանութները գէնք էին լցրել եւ զինուած նստել:

Յունիս 20ին հինգշաբթի զօրքեր եւ թուրքեր համաձայնում են ժամը 4ին շուկայում ընդհանուր ջարդ սկսիլ: Առաւօտեան արտակարգ շարժումներէ հայերը սկսում են կասկածիլ եւ ոմանք քաշուում են եւ ահա ժամը 2ին 4-500 զինուորներ առանց հրացանների՝ ատրճանակներով եւ դադոյներով զինուած յանկարծ լցւում են շուկան եւ դիմում դէպի մզկիթ: Թուրք ստանակներէ ոմանք առանց սպասելու ժամը 4ին, թուրքերու շարժումը նշանաբան առնելով, ընկնում են հայերի վրայ, որոնք սակայն փախուստ են տալիս: Բայց հէնց այդ խուճապի միջոցին, թուրքերը յաջողում են վիրաւորել փաղըղ հայերին: Նոյն հայոց թաղերում այդ միջոցին կիններ եւ երախտները մի զարկով լաց սկսեցին. գոչելով թէ շուկայում ջարդ կայ. անգէն անպատրաստ, յանկարծակի եկած հայերի աղաղակը, ամբոխի ահաբեկ կոչերը զորքերին բոլոր քաղաքը: Մոլորեցան հայ կիներէ շատերը դէպի շուկան, դէպի սուրն ու կրակը էին խուժում իրենց զոհարելութեամբ փրկելու իրենց սիրելիները: Տեսարանը յուզիչ էր:

Նոյն պահուն շատերը արդէն վիրաւորուել ընկել էին եւ շաղկով արիւնաթաթախ նրանց փոխադրում էին:

Այս արիւնահեղ իրադարձութիւն ժամանակ, զօրքերի հրամանատարը պարտիզում անտարբեր հանդիսատես էր:

Թուրքերը հազարն պատրաստութիւն են տեսնում նորից հայոց թաղերի վրայ յարձակելու համար, մեղկիթներում գէնք են դիզում, հայերի երկուղը անկարգաբար է:

Հայ գիւղերը—Գոմս, Սանիստ. Յունիս 20, Արտիթ չէրգէներ են լեցնում: հազորդակցութիւն չկայ, Դաշտում զօրքեր եւ ոստիկաններ անզաղարխու գարկում են: Մեծագոյն յանցանք է՝ այդ զոհաբախտ պայմաններում ինքնապաշտպանութեան փորձ անելու:

Կառավարութեան ճնշումների հետեւանքով յունիս 14ին շուկան նորէն բացուեց, եւ սակայն դեռ քանի ժամ չանցած լուր հասաւ որ Պէլլաչի քիւրդեր իրենց ցեղապետին Սլոի եւ Պրքօթ առաջնորդութեամբ նոյն օրը ժամը 8ին յարձակել են 30 տուրք Պաղու հայաբնակ գիւղի վրա ուր ապաստանել էին Հեռիկոս գիւղացի ուրը հաշտական հայ երիտասարդներ. քրդեր հրդեհում են նրանց կեցած տունը. խեղճերը

հազիւ մի տկար ընդդիմութիւնից յետոյ շնչահեղձ ու գնդակահար ետելեւեալ սպաննուած ու յօշոտուած են:

Պաղու գիւղը բոլորովին կողոպտուած է իր զոյքերից ու կենդանիներից. ճամբաների բոլոր տները այրուած են, տղամարդիկ հայաձական լեռներն են ընկել, կիներ, երախտք ընկել են ուրիշ գիւղերի փողոցները: Յաջորդ օրը՝ նոյն քիւրդեր բազմութեամբ յարձակել են Պաղուի հարեւան Մեղդի գիւղի վրայ, սպաննել են Մկրտիչ Ումուսեանը, ծանրապէս վիրաւորել են Հասիկ Մանուկեան եւ Աւագ Սիրօեան անասուններու մի մասը թալանել, ժողովուրդը ցրուել է:

ԳԱՆՁԱԿԻ ԿՈՏՈՐԱՆԸ

Անաթեկիցներու կողմէ Գանձակի մօտ հարուստ գործարարներէ մը ըստ պատմութեան վրայ, կողակները սպաննութեան հեղինակները հալածելիս կը յարձակն երկու անմեղ մարդոց վրայ: Այս վերջինները կը պատասխանէին աւստանակով եւ կրպակներէ մէկ կողակէ: Այս գէպը պատրուակ ծառայեց ջարդ սարքելու: Օգոստոս 30ին բարձր իշխանութիւններու ժառանգորդութիւնով, սպաննուած կողակներ հանդիսատար թաղումը կատարեցին, Պսակ բերած էին, վրան արձագործուած. «սպաննուած հայերու կողմէ դաւաճան Չարին եւ հաշտներին»: Երբ թափօրը կանցնէր հայկական թաղը, որթասպան սկսաւ առճանակ արձակել, մինչդեռ կողակները դրոհ տուին հայերուն վրայ, սպաննելով երկու հոգի եւ վիրաւորելով շատեր:

Հետեւեալ օրը փորձեցին հայ-թաւրական ընդհարում առաջ բերել, բարեբաղդարար անյաջող. հայ ժողովուրդին վրայ իբր պատիժ, ահաբեկ տուգանք դրուած է: Օգոստ. 4ին սպայ մը 4 կողակներով կանցնէր հայկական թաղը. կողակը կրակ ըրաւ սպայի ձիուն վրայ, այս միջադէպը ծառայեց նշան պօգործի: Առաւօտեան ժամը 10էն սկսան թալանել եւ կոտորել, Երկու հայ կիներ սպաննուեցան եւ ջարջուեցան: Ժողովուրդը ահաբեկ թիֆով կը փախչի: Կառավարութիւնը բացարձակ անտարբեր կը մնայ:

ԴՐՈՇԱԿ

ՄԱՍՆԱՌՈՐ ԴԱՍԵՐ

Տ Հմայեակ Խուչուլեան կը փափաքի մասնաւոր դասեր ըստանձնել հայերէնի և ֆրանսերէնի փափաքողները ուղղակի իրեն դիմելու են:

ՀԱՅԵՐԸ ՈՒ ՐՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

(Շար. նախորդ քիւնէն)

Նախ յեղափոխութեան ետեւէ եղող ժողովուրդ մը միշտ աչքի առջին սա նկատողութիւնը պէտք է ունենայ որ, չարժէր որ աղջ մը արիւն թափէ եթէ զոնէ այդ ազգին ստուար մեծամաս նութիւնը այդ թափուած արիւնէն պիտի չ'օգտուէր. ընդ միշտ մէկ կողմ պէտք է նետել իբր խանդաղուշանք ներ ազգայնական, հայրենասիրական, կրօնական հայեցողութիւնները, որոնցմով տգէտ ժողովուրդները իրենց զահիճներուն կողմէ կը մոլորուին կտրեւորն է ժողովուրդի մը համար ձեռք բերել միանգամայն քաղաքական թէ տնտեսական հանգստութեան պայմաններ. արդ եթէ հայերը զուտ ազգայնական շարժումը մը հետեւելով, իրենց շարքերուն մէջ ունենոր դասակարգի ներկայացուցիչներ ալ ընդունին, այն ատեն այս ներկայացուցիչներն ալ յեղափոխական նպատակը գործադրելու միջոցներուն մէջ իրենց հեղինակութեան ու գործունէութեան քաժինը պիտի ունենան. այսինքն, ունենոր դասակարգը իր կարգին իր ձեռքին տակ պիտի ունենայ ու ուղածին պէս պիտի կրնայ գործածել թրքական ռեժիմը տապալող ուժերուն մէկ աւելի կամ սուսազ կարեւոր մասը. այս պարագային ինչ երաշխաւորութիւն հայերը ունին որ այս ոյժը ունենոր դասակարգը պիտի չը գործածէ, թուրքը անգամ մը ջախջախելէ ետք, չունենոր դասակարգն ալ ջախջախելու ու իրեն օդտին զայն չահակաշկանդելու: Այս կէտը կարծուածէն շատ աւելի ծանր է, ու այսպէս է որ մինչեւ հիմայ կատարուած մեծ յեղափոխութիւնները վերջացած են. միշտ ժողովուրդները, թշուառութեան, ծայրակէտին հասած, իրենց արիւնը թափած են իրենց բաղդակից աւելի ունենոր դասակարգներուն հետ, յուսալով որ այս վերջինները իրենց մատուցուած ծառայութիւնները չեն մոռնար. ու սակայն տմէն անգամուն ալ, յեղափոխութեան հետեւեալ օրը, ժողովուրդները արթնցած են նոր շղթաներու, նոր կապանքներու մէջ, սարսափով միայն տեսնելով որ իրենց թափած արիւնը միայն տէր փոխելու համար է եղեր:

Հայերն ալ այժմ այս տագնապալի տարիներու մէջ կը գտնուին. իրենց

աչքերուն առջեւ կատարուած անիրաւութիւնները անոնց մտքէն անգամ անցնել չեն տար որ նոյն տնիրաւութիւնները, նոյն ջարդերը հայկական կառավարութիւն մըն ալ գործելու չէր վարանիր, եթէ պարագաները պահանջէին. վասնզի, եթէ կառավարութիւնները ժողովուրդները ոչ աւելի անասնացնելու ու շահագործելու համար, ազգայնական, հայրենասիրական բառերով զանոնք կ'օրօրեն, իրենց համար չիկայ հայրենասիրութիւն. ինչո՞ւ Ռուսիոյ օրինակը ուշադրութեան վրեպէր:

Ինչնեք այժմ թէ բան մը կը կորսնցնեն թէ կը շահին հայերը. եթէ մի միայն դասակարգային հողի վրայ կանգնած, հարստահարող կառավարութեան դէմ կ'ուր մղեն.

Կարելի է ըսել թէ այսպէսով կ'ուր ու յաջողութեան պայմանները շատ աւելի նպաստաւոր պիտի ըլլան, ու ճնշքին դասակարգային պատակտուններէ՝ առաջ եկած վնասները մեծապէս պիտի փոխարկուին ուրիշ կարգ մը առաւելութիւններով. իրաւ է որ այս պարագային ունենորներուն աշակցութիւնը կրնար պակսիլ. բայց միւս կողմէ ինչպէս չը տեսնել որ այս աշակցութեան զուցումը ապագայ փորձանքներու վերացումն իսկ ըլլալով հանդերձ, այդպէսով միայն կարելի պիտի ըլլար միւսիւրման հարստահարեալներու շատ աւելի թանկագին աշակցութիւնը ապահովել:

Չեմ կարծեր որ Դրոշակեան պոռոտախօսութիւնները դատապարտող (Դրաւունքը) ըսէր թէ հայերը դիւրուրեմաթութեան մը լուծը պիտի կրնային թօթափել. մինչեւ հիմայ շատեր, դրոշակեաններու պէս խնդ չեղողներէ, մեծ պետութեանց միջամտութեան հայոց մղած անհաւասար կռուին յաջողութիւնը կանկալէին. բայց այժմ այս յոյսով կարելի չէ օրօրուիլ. ինչո՞ւ ուրեմն չի տեսնուի որ հայերը շատ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ բռնակալութեան դէմ կ'ուր կրնան մղուիլ, եթէ իրենց հետ ունենան միւսիւրման տառապող տարրերու աշակցութիւնը: Միայն թէ, եթէ ոչ ոք չի կրնար հաւատալ թէ տառապող, հարստահարող միւսիւրմաններ ալ կան, շատեր գոհցէ անկարելի կարծէին հայոց ու միւսիւրմաններու այս գործակցութիւնը, չի կրնալ ուրանալով հանդերձ անոր օգտակարութիւնը. կարելի է սակայն դիտել տալ թէ, եթէ միւս

սիւրմանները տգէտ են, ու իրենց շահերը տեսնելու անկարող, որպէսզի հայոց հետ գործակցութեամբ մը զիրենք կեղեքող կառավարութեան մը ճիրաններէն ճողորին, հայերը իրենց կողմէ ինչ ըրած են, այդ տգիտութիւնը բառնալու ուղղութեամբ. կարելի է նոյն իսկ ըսել թէ հայերը այս տեսակետով միւսիւրմաններէ աւելի քարձր հայեցակէտի մը վրայ կանգնած են: Վասնզի, ինչ պայմաններ անհրաժեշտ էին, որպէսզի հայ ու միւսիւրման համերաշխութիւն մը գոյանար. պէտք պիտի ըլլար ճշդիւոր պայքարը երկու կողմէ ալ զուտ դասակարգային իրողին վրայ դրուիլ, ազգայնական ու կրօնական ճշտումներու ընդ միջով վերացումով արդ, մէկիւր թողով միւսիւրմանները, հայերը մինչեւ հիմայ միշտ ազգայնական ու կրօնական ճշտումներով է որ իրենց յեղ. շարժումները յառաջ տարած են, այսինքն ցեղային կռիւ մըն է որ մղած են, աւելի բանէ վեր իրենց աղքատութիւնը ու կրօնքը անհղծ պահպանելու հարցով հետաքրքրուելով. ինչպէս կուզուէր որ այս պայմաններու մէջ միւսիւրմանները հայոց գործակցէին:

Վերի բոլոր ըսուածներէն կը հետեւի որ, հայոց համար օգտակար ու պարտաւորիչ է որ յեղափոխ. կռիւը դասակարգային հողի վրայ գործելով մղուի. վասնզի 1) այդպէսով միայն կարելի պիտի ըլլայ ապագային մէջ ունենոր դասակարգներու շահագործութեան չենթարկուիլ, ինչպէս ուրիշ երկիրներու ժողովուրդներուն պատահած է. 2) Այդպիսով միայն ներկային մէջ ալ հայերը կարելիութիւն պիտի ունենան իրենց ապահովելու ետեւէ ըլլալու միւսիւրման տառապող ու չքաւոր դասակարգներու աշակցութիւնը, որ հայոց համար վերին աստիճանի կարեւոր է, հայերու անկարելի ըլլալով մինակ թուրքոյ դէմ կռուիլ յաջողութեամբ:

Միայն թէ պէտք է որ ժողովուրդին մէջ արմատացած ազգայնական ու կրօնական համոզումներն անխնայ հայ մամուլին կողմէ քննադատուին. հայ թերթերու համար անա՛ւ ամենակարեւոր ընելիք գործը, նոյն իսկ յեղափոխութեան օգտակարութիւնը փառաբանելու կարեւոր. վասնզի, որպէսզի ազգ մը ուրիշ աղբի մը լուծը թօթափելու

իրաւունք ունենայ, պէտք է այդ ուրիշ աղբին վրա առաւելութիւններ ներկայացնէ, ու չէր արժեք որ հայերը յեղափոխութիւն ընէին որպէսզի թուրք ազգայնութեան եւ նախապաշարունակութեան հայ ազգայնութիւնը ու հայ կրօնական նախապաշարունակները յաջորդել տային օր մը:

Քարիզ
Տ. ԷԼՄԱՍԵԱՆ
ԴԱՐՄԱՆՈՒՄ ԵՒ ԲՈՒԺՈՒՄ
ՀԻՒԾԱԽՏԻ
ԳՐԵՑ
ՏՕ ԲԹ. Մ. Ի Ի Թ Ի Դ Ն Ե Ա Ն
ԲԹԻՄԱ ՍՐԲՈՒՆԻ ՊԱԼԱՏԱՆ
(Շար. նախորդ քիւնէն)
ՀԻՒԱՆԻՒՆ ՍՆՈՒՆԻԴԸ

Կաթ, կաթեղէն, ինչպէս կաթնապուր. մուշակեղէն, թափուգ կէօքսիւ, մանաւանդ մածուն, աղը հանուած ճերմակ պանիր, թարմ կարագ. սեր հաւկիթ բրինձով պուրջուրով լափա, բաթաթէն, ա՛ւառ եղանակին ամէն տեսակ կանանչեղէն, սալաթա, կարմիր ճերմակ բողի, կանանչ ու սեւ ձիթապուր. իսկ ձեռքը չոր լուբա, բակլա, սիսեռ, պէզէլեա, ոսպ ու չոր պտուղ. ինչպէս ընկոյզ, կաղին, նուշ խաշած շաքանակ, պիտտակ (չամ) մանաւանդ ամերիկեանը. որ 29 0/0 քնաստիպ (ալպիւմին) կը պարունակէ որմէ հազիւ 9 0/0 կը գտնուի էն պատուական պիֆթիկին ու ինչպիսիքն մէջ:

Հիւսնոյն տաքութեան աստիճանը երբ 37ի իջնէ, ճերմակ միսով թեթեւ ու դիւրամարս ձուկեր, հաւ, քէչկէկ ինչէնպէ ապուր, ուղեղ, բայց միշտ ցորեկ ժամանակ, որովհետեւ երեկոյեան կերակուրները միշտ թեթեւ ըլլալն անհրաժեշտ է. ինչպէս ամէն առատ չառողջ մարդու եւ հիւանդի նոյնպէս հիւսնաւորներն ալ:

Ամառ ձմեռ եղածին չափ խնձոր ու տեւիւ է. եփած կամ հում ըստ ասոր ժակի կամ ճաշակի միայն թէ միշտ կեղեւովը, որովհետեւ կեղեւին մէջ ֆօսֆօթ քիմիքալ տը յօ անուր աղը պարունակելու, ամենէն օգտակար մասն է. եւ զայն անպատճառ ուտելու է, հակառակ այն ժողովրդական առածին, որ

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

(Շար. նախորդ քիւնէն)

Լուսիս իր գեղեցիկ գլուխը վեր առաւ բարձէն ու խանդաղատանքով մը համակուած՝ հօրը կուրծքին մօտ դրաւ ու զայն սեղմեց իր հրապառ ճակտին վրայ:

— Աս օրչա՛փ տաք է ճակատդ, աղջիկս, դողդաղ աւազակապետը Դուռն ջերմ ունիս . . . պէտք է բժիշկ մը բերել տամ:

— Բժի՛շկ . . . օ՛հ, չէ՛, հա՛յր իմ,

չէ՛. . . պէտք է ունիմ բժիշկի, առարկեց Լուսիս՝ իր թեւը հօր վզին բուրդը նետելով. Ես բան մը չունիմ . . . նայէ՛, հիմակ աղէկ եմ . . . շատ աղէկ եմ. Դու գիրկդ ամեն ցաւ կը փարատէ . . . 'համբուրէ՛, համբուրէ՛՛ զիս . . .

Աւազակապետը համբուրեց . . .

— Օ՛րիս . . . հա՛յր իմ, չափազանց կարօտեցի եմ քեզ, մրմնջեց Լուսիս: Ըսել է թէ՛՝ քովէդ չի պիտի հեռացունես դիս, չէ՛. ա՛լ մի՛նակ չի պիտի մնամ. . . Չեմ գիտեր. . . ժամանակ մը չարամնեցով, ամիսներով եւ երբեմն ալ տարիներով չէի տեսնի քեզ. բայց կըրնայի հոմբերել. . . հիմակ անանկ չէ՛. . . ինծի կուգայ որ յաւիտենապէս կը բաժնուիս. . . ինծի կուգայ որ պիտի չը վերադառնաս. . . մէկ խօսքով՝ աչքէս կը խլին քեզ: Չեմ կրնար մտածումներս ամփոփել. . . երբ աչքս քու ճամբուգ կը յարիմ, կը զգամ թէ կուրծքս կը լեցուի, սիրտս կայրի ու հոգիս կը զառնանայ: Փուճ տե՛ղ ես ինծի միւս

թարելու միջոց մը կը փնտռեմ. . . փուճ տե՛ղ առջի պէս արիասիրտ ըլլալ կուզեմ. . . օ՛հ. . . կը զգամ թէ է՛ ութիւնս կը մթնի ու գաղափարներս սարսափել երեւոյթ մը կ'առնեն: Հա՛յր իմ, սիրելի հա՛յր իմ, նայէ՛, ալ քու թշուառութեանդ չափը լեցուեցաւ. . . ա՛լ բաւական է երեսուն տարուան արկածալից կեանքդ. . . ինչ մնաց քեզի. . . Երթա՛նք, երթա՛նք մեր հայրենիքը. . . գոնէ մեր ա՛յն պաշտելի հողին մէջ թաղուինք ու հո՛ն հանգիստ ըլլանք. . . Հո՛ն, ա՛խ, հոն ամեն բան արիւնոտ բայց պաշտելի է մեզի: Այնտե՛ղ մեծ հայրս կայ, այնտեղ կարօտովդ հողին տակ ծաղկուած մայրս կայ. . . մանաւանդ՝ մեր հոգւոյն կանգնած անյիշատակ գերեզման մը կայ. . . Անոնցմէ հետեւ կը մնա՛նք, թո՛ղ հընչէ՛ մեր ականջին աւետակաց բուն. թո՛ղ հընչէ՛ մեր ականջին գերեզմաններէ արձագանգուած անիծից ու վրէժներու ձայնը. . . Անոնք՝ թէեւ դառն բայց մեր սրտին թրթռումներէն կանցնին:

Լուսիս խօսեցաւ Ա՛լ կարծես թէ պարպուած էր իր հոգին: Ես ալ առաւ անոր ճակատը կը զովանար ու գոյնը կը սկսէր կարմրիլ: Անուշ չունչ մը կեկնէր բերնէն ու աչքերու նայուածքը կը պայծառանար, ինչպէս ստուերի մը տակ ծածկուած աղամանդի հատկէ մը ցոյցացած շողքը:

Աւազակապետը քսնի մը օր չը թողուց որ անկողնէն ելնէր: Վերջապէս՝ երբ տեսնաւ որ ապաքինած էր, պատրաստեց ճամբորդութեան հարկ եղածներն ու պարտիկ վաճառականներու կարաւանին հետ գէպի վան մեկնելու որոշում տուաւ: Ինչպէս ըսած ենք, Աւազակապետը լաւ պարսկերէն գիտնալուն համար ո՛չ մէկը կը կասկածէր անոր վրայ:

Ապահով եղաւ ճամբորդութիւնը: Կէս օրը քսնի մը ժամ անցած էր, երբ Աւազակապետը Վան քաղաքը մը տաւ:

— Ո՛ր կուգես բնակիլ, աղջիկս, հարցուց ան:

կրօն. Արմուշը սայ զա եկ. հշմայր սոյ զա եկ:

Իսկ բացարձակապէս արգելուած են կարմիր միսերը, միսի ջուրը, պիֆթի, քիւլպաթի եւ այլն, եփած ձիթաւի, քացախ, սուրճ, թէյ եւ ուրիշ ըմպելի ինչ որ ալ ըլլայ:

ՀԻՒԱՆԴԻՆ ՀԱԳՈՒՍՏԸ

1. Հիւանդին տարիքն ինչ որ ալ ըլլայ, ինչպէս եւ սեռը, ուր որ ալ բնակի, ամառ ու ձմեռ ընաւ երբեք մարմինն վրայէն բուրդի փափկա հագնելու չէ:

2. Ի ծնէ կամ տարիներով միսին վրայէն ֆանէլու հագնելու հակառոշական, վնասակար եւ միշտ վտանգաւոր սովորութիւն ունեցողն ալ մինչեւ որ կատարեալապէս աղէկնայ, շապիկին վրայիւն հագնելու ե:

3. Ծապիկն ու վարտիքը միշտ քմանէ (քէթէն պէզի) հաստ ու ծակոտիկ կտաւէ ըլլալու են անպատճառ:

4. Հիւանդին չապիկը, վարտիքը, դուլպաններն ու անկողինին վերաբերեալ բոլոր ճերմակեղէնները ամեն օր փոխելու եւ եռացեալ ջուրի մէջ թրջոց գնելէ ետք լուալու է:

ՀԻՒԱՆԴԻՆ ՍԵՆՆԱԿԸ

1. Հիւանդին սեննակը օգուէտ, լուսաւոր, արեւոտ ըլլալով հանդերձ, պատուհաններէն մին միշտ ոչ միայն ցերեկը, այլ գիշերներն ալ բաց պահելու չէ:

2. Հիւանդին սեննակը միշտ օգուէտ ըլլալով հանդերձ, հիւանդն օդի հոսանքէ միշտ զերծ մնալու է:

3. Հիւանդին սեննակին մէջ միշտ բաց պահուելիք պատուհանը սեննակին առաստաղին խիստ մօտէն բացուած ըլլալու է, որպէս զի կարելի ըլլայ ուղուածին չափ բանալ, Գիշերները բաց պատուհանով սեննակին մէջ պառկելու սովորութիւն չունեցողները ձմեռուան ցուրտ օդին, հոգիին ու փութին ազդեցութենէն զերծ մնալու համար նախ մէկ մատի չափ պէտք է բանալ, յետոյ օրէ օր աստիճանաբար աւելի բանալով, առողջ մարդոց նման հիւանդներն ալ կը վարժուին անոր անվտանգ:

Այս առթիւ կանխելով թէ այս առողջապահիկ կանխը ոչ միայն հիւսնախառնութիւններու եւ ուրիշ հիւանդներու, այլ եւ առողջ մարդոց համար ալ ամառ ու ձմեռ անհրաժեշտ է:

4. Հիւանդին սեննակը, առանց աւ-

ելու խոնաւ ըլլալու չափ, թաց լաթով մը ամեն կողմ սրբելու է ամեն օր, որովհետեւ եթէ ըստ սովորութեան չոր պալուր, փոշիները օդին մէջ տարածուելով, կրկին կը չորին սեննակին մէջ եւ չնչառութեան միջոցաւ հիւանդին թոքերուն մէջ կը մտնեն, որ միշտ վտանգաւոր է տմեն տեսակէտով:

5. Հիւանդին սեննակին մէջ անհրաժեշտ պէտք եղածէն աւելի բան զտոնուելու չէ. բարակ վարսգոյր մը կամ կտնանչ սրտ մը բաւ է: Գորգ չորանակ, զանազան զարդեր, մէկէ աւելի աթոռ, եւն. պահելու չէ:

6. Գիշերները բնաւ երբեք կազ վառելու չէ:

7. Հիւանդին սեննակին մէջ ուրիշ ուտելիք, խմելիք, ծաղիկ եւ ուրիշ հոտեղէն բան պահելու չէ:

Հիւանդին սեննակը հակաճիւղիւ համար առիտ փէնիֆ. լիզու եւ ուրիշ քիմիական, թունաւոր եւ միշտ վրտանգաւոր դեղեր բնաւ գործածելու չէ:

9. Ամենուր ծանօթ միշտ արտաքին քիմիական իմ փորձառութեամբս կը վստահեցնեմ թէ ամէն տեսակէտով ամենէն ազդուն եւ օգտակարն է, ոչ միայն հիւանդին սեննակին մէջ, այլ եւ ամբողջ տանը մէջ այս պատուական հունար ծխել (թութսի) խիստ առողջարար է:

Ես թութսիէն զատ բոլոր հիւանդներուն ալ օրը 5, 6—12 ծածկ կուտամ անկէ, որովհետեւ թէ հակաճիւղիւն է եւ թէ արտաքին կը բանալ ստամոքսին ու աղիքներուն մէջ գտնուած գէշ ու թունաւոր կազերը կարողութիւն, կը միզեցնէ, մէկ խօսքով արիւնը կը մաքրէ:

Արտաքին քիմիական ասիտ ֆէնիֆի եւ ասոր նման քիմիական գեղերու հակաճիւղիւ յատկութիւնը ունի, բայց անոնց նման սուղ չէ եւ ոչ այ վրտանգաւոր: Քաշը 1—2 լի կը ծախուի եւ ամէն կերպով առողջարար է, թէ իբրեւ բնական պարզ դեղ ուտելու եւ թէ դուրսէն թութսիի ձեւով գործածելու համար:

ՀԻՒԱՆԴԻՆ ԽՈՒԽԸ (Պալլաւ)

Քանի որ Գիտութիւնը հաստատած է թէ հիւսնախառն բուժելի ըլլալով հանդերձ փոխանցիկ է եւ իր փոխանցման գլխաւոր միջոցն ալ խուխն է, փոխանակ հակաճիւղի գեղեր գործածելու հիւանդը թուղթի կտորներու մէջ թրջելով անմիջապէս այրելու է: Այս կերպ

Ու այսպէս՝ չորս ամիսներ ցան:

Բայց Լուսիս՝ փոխանակ իր կորովը պահելու, վառ վերադառնալէն ետքը հալու մաշ կեանք մը ստացաւ ու կորսնցուց ոգեւորութիւնը: Կարծես թէ հանգիստ կենցաղը՝ զոր փափաքած էր, աւելի ծանրացաւ անոր վրայ: Թէպէտ եւ ջանար իր էութեան մէջ ցամաքող կենդանութիւնը ծածկել, սակայն զէմքը կը պահպանուէր զայն: Ու մինակ եղած ատեն, ներքին անգիտակից ու անզուսպ խռովքէ մը գլորուած, կուլար սւ ատով կը պարպէր իր գառնութիւնը:

Աւազակապետը կը տեսնէր այս բոլորը Լուսիայի փոփոխութիւնը դառն ու միանգամայն աղետալի կը դառնար: Ի զո՛ւր...

(Շարունակելի)

պով միանգամ ընդ միշտ կոչնչանայ, առանց ծախքի եւ թքամանք մաքրելու հոգ ու խնամքի ալ պէտք չի մնար, մանաւանդ որ ամենէն ալ ապահով է:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ պատրիարքարանի Խառն Ժողովը հանգուցեալ Ա. Եռուսէսքուի կտակը, յանձնաժողովոյ մը միջոցաւ քննելէ յետոյ որոշած է 100 ին 25 յատկացնել հոնգուցելոյն քրոջը, որ դատ բացած էր իր եղբոր ժառանգութեան տիրանալու համար:

Մանգուռնէ կը բողբէ այդ որոշումին դէմ ու կը պահանջէ որ ոչինչ չը տրուի այդ կնոջը, որուն ապագան ապահոված է եղբոր եղբայրը իր ողջութեանը:

— Թուրքիոյ մէջ մեր եկեղեցական և բարեգործական հաստատութեանց պատկանեալ վազդի կալուածներու մասին կառավարութիւնը դժուարութիւններ հանել սկսած ըլլալով, Պատրիարքարանը խնդիրը լրջօրէն քննելէ յետոյ, որոշեց ղեկուցանել բոլոր թաղական մարմիններու որ յետ այսօրիկ ազգ. զանազան հաստատութեանց համար վագրֆ կալուած չը գնուի, այլ սրբֆ միշտ տեսակէն գնուին ու յետոյ վագրֆի վերածուին: Իսկ գտնուած ազգային վագրֆ կալուածներն ալ օր առաջ ծախուին:

— Տէր Վահրամ արքեպ. Մանկունի իր Երուսաղէմ մեկնելուն առթիւ Միջագիւղի մէջ ունեցած երկու կալուածները կտակեր է աղքատ տղայոց դաստիարակութեան ի նպաստ:

— Ազգ. Հիւանդանոցի նոր հոգաբարձութիւնը պիտոճէին կա. նոնաւորման գործով լըաղելով որոշած է ժամանակի մը համար դադրեցնել նոր որբերու և անկեալներու ընդունելութիւնը և կարելի եղածին չափ սահմանափակել պատսպարեալներու թիւը:

— Նպաստից Յանձնաժողովը քայքայեալ վիճակ մը ստացած է, անգամներուն մեծագոյն մասը նիստի չեն երթար: այս անգամ երկուքն ալ հրաժարեցան: Մինչ անդին նպաստի պէտքը աւելի կը չեչուի նորագոյն աղէտներու պատճառաւ:

— Բարթող փաշա 50 օսմ. լիրա նուիրած է էտիրնէի հրկիզեալ ազգ. հաստատութեանց վերաշինութեան համար:

— Ակնայ հրգեհէն այրած են 225 ի մօտ խանութ, 7 խան և 25 տուն, թաղապետութեան, Հանր. Պարտուց վարչութեան, հեռագրատան և երկրագործ. պանքայի շէնքերը: հեռագրական հաղորդակցութիւնը խցուած են: Հըրգեհէն խանէ մը ծագում առած է: Եկեղեցիին, Առաջնորդարանը, և անոնց շուրջը գտնուած մէկ քանի ազգ. կալուածներ զերծ մնացեր են: անձի կորուստ չկայ: Պատրիարքարանէն 30 ոսկի նըպաստ զրկուեր է Առաջնորդարանին հրկիզեալ կարօտներու բաժնուելու:

— Վիտինէ մեզ կը գրեն: «Քաղաքիս մի քանի հայ ընտանիքները իրենց մէջ հաւաքելով 270 ֆր. զրկած են Պատրիարքարան, Հայաստանի սովետոյ յատկացնելու համար: Դրամը բօթին յանձնուած է թուականէս 15 օր առաջ»:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. » (433 էջ) 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳՈՒՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱՎԱՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճիշտացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅԻՆԵԼԻՔԻ ՁԱՔՆԻ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմե՛ք ՎԱՌՆԱ « Ի Ր Ա Ո Ւ Ն Ք » ի խմբագրութեան

 **ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԷՆ**

Հասան մեզ մեծ քանակութեամբ նոր առնուած

ՀԱՅԵՐԷՆ ԿՐԱՄՕՅՈՆԻ ՓԼԱԳԱՆԵՐ

Փութացէք ապահովել Ձեզ վաճառումը այս նոր փաշա. ներու Ձեր նահանգին համար:

Մեր փաշաներու ցուցակները հայերէն, տաճկերէն եւ զանազան եւրոպական եղանակներու կ'ուղարկենք ձեր փաշաքոյաջ:

Հեծելանիւի, կրամօֆօնի եւ պէնզին լամպաներու վրայ մի տաք ապսպրանք ուրիշ տեղ նախ քան մեր ցուցակները աչքէ անցնելը:

Ն. ԱԼԵԱՆԱՔ և Ռ. ԾԵՐՈՒՆԵԱՆ — ՌՈՒՍՃՈՒՔ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԵՄԵԼԱՆԻՒՒ ՓՐՈԿՐԷՍ

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻԻՐԻՍ

Պիթիւթիւթիւ, Էրզրումում, Տրապիզոնում և Խարբուլում վուգու պուլտրիզ կիպի, թէքրար ասքերլէրտէ շէտիտ իսթիլալար զուհուրա կէլմիշ տիր, Ասը ասքերլէրի իթաաթա կէթիւրմէք իչիւն՝ ասքերլէր պէյնիւնէ գանլը հարաքէթլէր վուգու պուլտու, Պիր չոգ ասքերլէր էօլտիւլէր վէ Եարէլէնտիւլէր:

— ԲՈՒՍԻԱՍԱ պաշ կէօսթէրմիշ օլան գօլէրա իլլէթիւնի թիւրքիայ սէրայէթ իթմէմէսի իչիւն Սուլթան պիր իրատէ իլէ սըհհիլէ գօմիսիօնըն թէտապիրի լազըմէ իթթիլազ իթմէսիւնի էմր էլլէտի:

— Թիիւթի կազէթալարըն Եազտըլարըն պինաէն, Հիճազ շըմէնտըֆէրի 1908 ապրիլ 14է տէկիւն Մէքքէյէ գատար իքմալ օլունուպ, րէսմի քիւշատը իճրա իտիլէճէք: Պու սէնէ Մէքքէյէ կիտէն հաճըլար շըմէնտըֆէր իլէ ալտէթ իտէպիլէճէքլէր իմիշ:

— ԶԱՊԻԹԻԻՆ րութպէլէրի Եիւքէլթմէք խուսուսընտա գապիթանտա խօշնուտիլէթսիլիք հուսուլա կէլմիշ օլմալլէ, պիր չոգ գապիթլէր գալապալլըլէ սէրայա կիտուպ շիքայէթ իթտիլէր: Սուլթան պու հուճայիշտէն գօրգարաք պիւթիւն շիքայէթճիլէրին րութպէլէրին Եիւքսէլթտի:

— ՍՈՒԼԹԱՆ պա իրատէ Գօնեա պաթաղըլըր գուրութմաք էմր իթտի օրատան Անտօլու շըմէնտըֆէր շիրքէթի Եէնի խաթթինչա իթմէկէ պաշլալաճադ տրու Պու Ալման շիրքէթի, Եանի Տէօյչէ Պանգ, թիւրք հիւքիւմէթիւնէ 600,000 լիրա իսթիքրազ վէրմէք իչիւն մուխապէրէտէ տիր, Բէզա տահա պէօյիւկ պիր իսթիքրազա վասիթա օլաճադ ըմըշի:

— ՄԱԲԷԹՈՒՆԻԱՍԱԲԻ Էվրոբալը սիյասի աճէնթլէրին իտտասը իւզէրինէ Եէնիճէ՝ Վարտարըն իքի ասքէր գօմանտարլարը աղլօլունտուլար, զիրա օնլար րուճ շէթալարըն գարշը կէվէկ տալմանըլար ըտը Բէզա մէզքիւր գազատա պուլընան իքի թապուր մուհաֆազա ասքերլէրինէ Եօլ վէրիլտի:

— ԻՆԿԻԼԻՉ-ԲՈՒՍ իթիլաֆնամէսիւնի թանգիմի Սթանպօլտա պէօյիւկ թէէսիր հասըլ իթտի, վէ հէր նէ գատար գօրգմայըն, տէնմիշ իսէտէ, թիւրքիայա տալիր տօղրուտան Եախօտ տօլալըտան մէզքիւր իթիլաֆնամէտէ նէ պէնտլէր պուլընտըլընը սապըրսըզա անլամադ իսթիյօրլար:

— ԷԲՄԷԲ ֆիյաթընըն արթմասը սէպէպի իլէ Սթանպօլտա

գարըշըլար վուգու պուլտու, չոգ մահէլլէրտէ նիւմայիշլէր իճրա օլունտու Էրզրումում իքի էքմէքճի էօյիւմ տէրէճէսիւնտէ Եարէլէնտիւլէր:

— ՊԻՐ ԻՐԱՏԷ իւզրէ Եէնիտէն իւշ հուգուգ մէքթէպի թէէսիս օլունաճադ տըր: Պիրիսի Սէլաշիքտէ պու սէնէ աշըլաճադ տըր:

— ՍԱՄՍՈՒՆ Եէնի բրէնսի աւալա Եէթիշմիշ վէ հիշ պիր վէլլէլէ զուհուր իթմէմիշ օլտըլը Աթիւնտուս պիլտիլիլիյօր:

ՏԱԽԻԼԻԷ

ՍՈՅԻԱՍԱ Պուլկարիանըն Գուրթարընը նամընա իճրա օլընան շէնիլքլէրտէ մաթէմնաք պիր մէնլարէ տախի վազը օլմուշ տըր: Մաքէթիւնիլար սիյաշ պանտէրա էօնլէրինտէն վէ մուզիքտըն տիլուզ պիրտհէնկի իլէ սէրայըն վէ ասքերիլէ գլիւպըն էօնլէրինէ կիտէրէք բրէնսլէր վէ րուս ժէնէրալլարըն պիր նիւմայիշ իթտիլէր վէ շու իպարէ իլէ պիր գուրօնա թազտիմ էլլէտիլէր:

«Միւնէթտար Մաքէթիւնիլար թարաֆընտան՝ Գուրթարընը պէօյիւկ Ձարա քի՝ պուլկար վաթանըն նաթիւրէլ սինօրլարընը թայիւն իթտի:

— ՖԷԻՍ ԲԻԷՆՍԻՆ պիրատէրի բրէնս Օկիւստ տը Գօպուրկ վէֆաթ իթտի Պու սէպէպլէ Բրէնս հազրէթլէրի ագաւմ զիյաֆէթտէ շախսէն հազըր պուլընամատը իսէտէ, շէնիլքլէրին տէվալ իթմէսիւնի էմր էլլտի վէ պիրատէրինին վէֆաթընըն խապէրի օլկիւնիւ կազէթալարա Եազըլմա մասընը թալսիլէ իթտի Էրիէսի կիւնիւ իւշ թըրէն իլէ միսաֆիլէր, վիւքէլա վէ սաիրէ Բլէֆնայա կիտուպ, օլ ճիվարլարտա տախի ալըն րուհանի վէ շէնիլքլէր իճրա իտիլտի:

— ՏԻԻՆ ԱԳՇԱՄ Սօֆիատան րուս ժէնէրալլարը թըրէնի մախսուլէ իսկէլէմիլէ վասըլ օլտուլար:

Պու կիւն տախի Կրան տիւք Վլատիմիր գէվէճէսի, մախսուլու, Ֆէխամ Բրէնս հազարաթը վէ վիւքէլատան պազըլարը թըրէնի մախսուլէ շէհրիմիլէ մուվասէլէթ իտէրէք, պէօյիւկ ալալլէ պուլկար քիլիսէսիւնի զիյարէթ իտուպ, օրատան Էվքսիւնօլրատ քէօյիւնէ կիտէրէք պիր իքի կիւն իսթրահաթ իտէճէքլէր: Շէհրիմիլ տիւնտէն պէլու պանտէրալարլէ թէզիւն օլունմուշ տըր:

— ԿԱԶԷԹԱՄԸԶԸՆ թապ օլընաճազը սաաթտա (սաաթ 11) Բրէնսլէր հազարաթը թըրէնի մախսուլէ շէհրիմիլ սթաիօնընա Եէթիշուպ, շէհրէ կիրմէքսիլի, իսքէլէտէն տօղրու Էվքսի-

նօկրատա կիթտիլէր, ճէտտէլէրտէ, բէնշէրէ վէ պալգօնլարտա պէքլէյէն էհալի միսաֆիր բրէնսլէրի կէօրմէք իսթէյիւնի տիկէր կիւնէ սաղլամայա մէճպուր օլտու:

ԲՈՒՍԻԱ

Մօսկուտա Եէնիտէն տէօրտ քիշի գօլէրատան թութուլմուշ օլուպ իւշիւ էօլմիւշ տիր:

— ՕՏԷՍԱՍԱ Եհնուտիլէրէ գարշը ֆանաթիք Բուսլարըն թաագէպաթը տէվալ իթմէքտէ տիր: Հիւքիւմէթ սուրէթա Եհնուտի մահէլլէրի վէ տիւքեանլարը մուհաֆազա իթմէքտէ տիր:

— ԲՈՒՍ հիւքիւմէթի Էրմէնիլէրին սինօրտան իչէրի կիրմէսինի մէն իթմիշ տիր, Էլլէրինտէ նիլալը բասաթթըր օլան միլլէթտաշլարըմը տախի գօնսօլոսհանլէրտէն բասաթթըլարընը գալտ իթտիլէմէյօրլար:

ԱՃԷՄԻՍԱՆ

ՄԸՍԸՐՏԱ նէշր օլընան «Թուռնալ տը Գէն» կազէթալընը ըթթանպօլլու րէսմի պիր զաթտան ալտըլը մալիւմաթա պինաէն, թիւրքիա իլէ Աճէմիստան պէյնիւնէքի շիմտիքի իսթիլաֆաթըն սէպէպի շու ըմըշ Սուլթան Համիտ ալա իսթէմէլքի սինօրտալ պիր իսլամ հիւքիւմէթ Գանուլը Էսասի աքէալընճա իտարէ օլունտու, պու սէպէպլէ Սուլթան միւթէվէֆա Մուզաֆէրէտտին Շահա վատ իթմիշ քի՝ Էկէր իսթիլալը զապթ իթմէք իչիւն Շահա իթթիլա իտէր իսէ հարտըմընան ասքէր Եօլալաճադ, ֆազաթ էօլէն Շահ գապուլ իթմէմիշ Սուլթան պու տէֆա Եէնի Շահա պիր մէքթուպ Եազուպ, բէտէրինին իլան իթտիկի Գանուլը Էսասի լալվ իթմէսիւնի թէքլիթ վէ վատընը թէքրար էլլէմիշ, Համիտին պու մէքթուպը ինկիլթէրա տուլուպ Լօնտրատաթի թիւրք էլլիսիւնէ բրօթէսթ իթմիշ, Ֆազաթ Սուլթան Համիտ էֆքեարընը իլէրի

կէօթիւրմէք իչիւն 100,000 լիրա մէսարիֆ իտէրէք՝ պիր թազըմ մօլլալար վէ սօֆթալար Աճէմիստանա Եօլլամաղլէ՝ Էհալիի Գանուլը Էսասիլէ գարշը նիւմայիշաթա թէշվիդ իթմիշ, լաքին պու թարիլլէ տախի մադսէտինէ մուվաֆադ օլմատըլընտան, էմր իթմիշ քէնտի օրտուսընա քի Աճէմիլէրէ պիր տէրա վէրիլսին, իչթէ պու էմրէ պինաէն թիւրք ասքէրի պիր վազըլթտան պէրու Աճէմիստան սինօրընա կիրմիշ օլուպ, խալլը մահէլլէր ալթիւսթ իթմէքտէ տիր:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԶԱԶԱԳ Ե. Տհրհրհաւն. — Իմացուցէք Ձեր պաղատ թիւերը որ զրկենք: ԲՈՒՍՁՈՒԲԻ ԱՂԲԱՍԱԽՆԱՄ — Մօնցեր էք Ձեր նամակին նամակադրօմ փակցեն, նաեւ զրկել հրատարակման ծախքը, որ թերթիս ճակատը ծանուցուածին կ'ըսէ պէտք է ըլլայ, ընկերութիւնը ըլլալով բարեգործական ազգային հաստատութիւն մը: Սլիվէնի Ազգ. Վարժարանին անունով հանգանակութեան ելլող Տ. Կարապետ քննչ, Սահակեանի այժմ ուր գտնուիլը գիտցողներէ կը խնդրուի որ հաճին քարոզով մը իմացնել խմբագրութեանս:

ԹԻԻՃՁԱՐԻՑԷ

ՊԱԿԱԼԻՑԷ

Վարձա քիւստընտա պազգալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, թիւն ֆրանք իլէ:

ԳԱՀՎԷ	1.65 - 2.20
ՇԷԲԷՐ նէմցէ	89.
ՇԷԲԷՐ քէսմէլ սանտըգ	44.50
ԲԻՐԻՆՃ ձէնօլա շուվալը	45.50
» Ֆիլիպէ »	45.
» Ինկիլիդ »	34.
Բիգօ »	50.
ԿԱԶ Սանտըր	10.80
ՉԷԹԻՆ հազը քիլօ	1.25 - 1.35
ԳՈՒՐՈՒ Բիլլիւմ	40.
Եուսուլթա 100 ամէթի	5.60

Издатель: Д-ръ М. Торосианъ
печатняца Д. Тодоровъ С-не — Варна

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՔՈՒՐ, ԱԺԱՆ ԵՒ ՇՈՒՏ
ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ

«Իրաւունքի խմբագրութիւնը յանձն կառնէ տպագրական ամէն տեսակ գործեր՝

Հարսանեկան հրաշիրագրեր, Նամակագրութիւններ, Մանագրներ, Այցաքարտեր, Յայտարարութիւններ, Հաշտարարներ, Եւայլն պատրաստել մեծ խնամքով և չափաւոր գներով:

Տպագրական զարգացործերու համար սկսած են հասնիլ նոր Եւրոպի տաւեր:

Խմբագրութիւնս իր տրամադրութեան տակ ունի նաեւ Պուլկարերէն և Ֆրանսերէն գրեր ամէն տեսակներով:

— ԾԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԷՔ ՓՈԹՈՎ ԿԸ ԿԱՍԱՐՈՒՆ —

ՎՃԱՐՈՒՄԸ ԿԱՆԹԻՊԻ